ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

# ՈՐՈՇՈՒՄ

«29» հոկտեմբերի 2021 թվականի N 288-Ռ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 5-րդ կետով՝ Հաշվեքննիչ պալատը

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝**

Հաստատել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեում 2021 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացությունը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ Լ. ՅՈԼՅԱՆ

*Հավելված*
*Հաստատվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի*
*2021 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ 288-Ա որոշմամբ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

# ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածական մաս ..... . . . .....3
2. Ամփոփոգիր.....5
3. Հաշվեքննության հիմնական արդյունքներ.....9
4. Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ցուցանիշները.....9
5. Հաշվեքննությամբ արձանագրված այլ փաստեր ..... 19
6. Եզրակացություն.....20
7. Առաջարկություն..... 21

# I. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

| | |
|---|---|
| Հաշվեքննության հիմքը | Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2021 թվականի օգոստոսի 2-ի թիվ 220-Ա որոշում: |
| Հաշվեքննության օբյեկտը | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե: |
| Հաշվեքննության առարկան | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեում 2021 թվականի պետական բյուջեի վեց ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն: |
| Հաշվեքննության չափանիշները | ՀՀ կառավարության 28.02.2019 թվաանի թիվ 170-Ն որոշումը<br>ՀՀ ֆինանսների նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 01/73/19739-2020 գրությունը<br>«ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 2215-Ն որոշում |
| Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը | 2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2021 թվականի հունիսի 30-ը: |
| Հաշեքննության կատարման ժամկետը | 2021 թվականի օգոստոսի 9-ից մինչև 2021 թվականի հոկտեմբերի 30-ը: |
| Հաշվեքննության մեթոդաբանությունը | Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանությունների, ՀՀ պետական բյուջեի 3,6,9 ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության մեթոդաբանությունների համաձայն:<br>Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ և վերակատարում ընթացակարգերը: |

| | |
|---|---|
| Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանումը | Հաշվեքննությունն իրականացվել է Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի վեցերորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի նախագահ Լ. Յոլյանը: |

# II. ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցածքների նախարարության ջրային կոմիտեի (այսուհետ՝ ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտե) 2021 թվականի պետական բյուջեի տարեկան ճշտված պլանը կազմել է 30,454,495.00 հազ. դրամ: Հաշվետու ժամանակահատվածի (2021 թվականի վեց ամիսների) ճշտված պլանը կազմել է 20,403,816.90 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 11,035,401.24 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 9,612,561.18 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախս)՝ 10,725,290.01 հազ. դրամ: Հաշվետու ժամանակաշրջանում՝ ճշտված պլանի նկատմամբ, փաստացի ծախսը կատարվել է 47.12%-ով:

ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեում 2021 թվականի վեց ամիսներին նախատեսվել է թվով 7 ծրագրի շրջանակում իրականացնել 37 միջոցառում, որից չի իրականացվել 13 միջոցառում:

ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեում 2021 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման նկատմամբ հաշվեքննությամբ՝ ելնելով նշանակալի հոդվածների նվազագույն ծածկույթից, ընդգրկվել է ստորև ներկայացված աղյուսակում բերված չորս միջոցառում՝ 6,585,419.01 հազ. դրամ ընդհանուր գումարով:

Այսպիսով՝ հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի կողմից չի ապահովվել ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցառումների և փաստացի ծախսերի կատարումը:

ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեում 2021 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման նկատմամբ հաշվեքննությամբ ընդգրկվել են ստորև ներկայացված չորս միջոցառման շրջանակներում «511200 Շենքերի և շինությունների շինարարություն» հոդվածները՝ 6,585,419.01 հազ. դրամ ընդհանուր գումարով: Դրանք են՝

- ✓ «1004 Ոռոգման համակարգի առողջացում» ծրագրի «31005 Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի շրջանակներում ջրային տնտեսության ենթակառուցվածքների հիմնանորոգում»,
- ✓ «1072 Ջրամատակարարման և ջրահեռացման բարելավում» ծրագրի «31001 Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերանորոգման ծրագրի երրորդ փուլի շրջանակներում ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների հիմնանորոգում»,
- ✓ «1004 Ոռոգման համակարգի առողջացում» ծրագրի «31001 Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման

ծրագրի երրորդ փուլի շրջանակներում ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների հիմնանորոգում»,

✓ «1072 Ջրամատակարարման և ջրահեռացման բարելավում» ծրագրի «31002 Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլի շրջանակներում ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների հիմնանորոգում» միջոցառումները:

1004 ծրագրի «31005 Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի շրջանակներում ջրային տնտեսության ենթակառուցվածքների հիմնանորոգում» միջոցառման համար նախատեսված 50,000.0 հազ. ԱՄՆ դոլարից՝ ներառյալ ՀՀ կառավարության համաֆինանսավորումը, 01.01.2021 թվականի դրությամբ ծախսվել է 16,109.197 հազ. ԱՄՆ դոլար (32.2%), իսկ 01.07.2021 թվականի դրությամբ՝ 20,565.987 հազ. ԱՄՆ դոլար, կամ 2021 թվականի վեց ամիսներին ծախսված գումարը կազմել է 4,456.79 հազ. ԱՄՆ դոլար:

Տվյալ միջոցառման «5112 Շենքերի և շինությունների շինարարություն» հոդվածով հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանը կազմել է 2,350,971.70 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 449,942.10 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 2,630,432.97 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախս)՝ 2,005,701.02 հազ. դրամ: Փաստացի ծախսը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 111.89%:

1072 ծրագրի «31001 Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերանորոգման ծրագրի երրորդ փուլի շրջանակներում ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների հիմնանորոգում» միջոցառման ընդամենը գումարը կազմել է 35,700.0 հազ. եվրո՝ ներառյալ 5,700.0 հազ. եվրոյի չափով համաֆինանսավորումը: 01.01.2021 թվականի դրությամբ վարկային միջոցներից ծախսվել է 3,929.77 հազ. եվրո, կամ ծրագրով նախատեսվածի 11.0%-ը: 01.07.2021 թվականի դրությամբ ծախսը կազմել է 6,533.03 հազ. եվրո, իսկ 2021 թվականի վեց ամսվա ծախսը՝ 2,603.30 հազ. եվրո:

Տվյալ միջոցառման «5112 Շենքերի և շինությունների շինարարություն» հոդվածով հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանը կազմել է 2,461,281.50 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 200,000.00 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 237,672.37 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախս)՝ 1,625,126.10 հազ. դրամ, կամ փաստացի ծախսը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 9.66%:

1004 ծրագրի «31001 Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող «Վեդու ջրամբարի կառուցում» միջոցառման ճշտված պլանով «5112 Շենքերի և շինությունների շինարարություն» հոդվածով նախատեսվել է 5,071,075.1 հազ. դրամի ծախս, հաշվետու ժամանակահատվածի

ճշտված պլանը կազմել է 3,779,064.10 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 423,798.50 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 2,565,554.91 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախս)՝ 1,766,838.23 հազ. դրամ: Փաստացի ծախսը՝ ճշտված պլանի նկատմամբ, կազմել է 67.88%:

1072 ծրագրի «31002 Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլի շրջանակներում ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների հիմնանորոգում» միջոցառման տարեկան ճշտված պլանով «511200 Շենքերի և շինությունների շինարարություն» հոդվածով նախատեսվել է 2,316,472.40 հազ. դրամի ծախս, հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանը կազմել է 1,256,854.20 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 110,000.00 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախս)՝ 1,187,753.66 հազ. դրամ, փաստացի ծախս չի կատարվել:

Ըստ առանձին միջոցառումների՝ հաշվեքննությամբ արձանագրվել են հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի կողմից չեն ապահովվել ինչպես 2021 թվականի վեց ամիսների ՀՀ պետական բյուջեով նախատեսված ծախսերի, այնպես էլ միջոցառումների կատարումը՝ հաշվետու ժամանակահատվածում ճշտված պլանի նկատմամբ, փաստացի ծախսը կատարվել է 47.12%-ով, իսկ նախատեսված 37 միջոցառումներից 13-ը չեն իրականացվել:

2. Կատարողականի ցածր մակարդակ է արձանագրվել նաև առանձին միջոցառումների գծով: Այսպես՝ «1072 Ջրամատակարարման և ջրահեռացման բարելավում» ծրագրի «31001 Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող՝ ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերանորոգման ծրագրի երրորդ փուլի շրջանակներում ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների հիմնանորոգում» միջոցառման «5112 Շենքերի և շինությունների շինարարություն» հոդվածով ճշտված պլանը կազմել է 2,461,281.50 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 237,672.37 հազ. դրամ, որը կազմել է ճշտված պլանի 9.66%-ը: Ինչ վերաբերում է նույն ծրագրի «31002 Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլի շրջանակներում ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների հիմնանորոգում» միջոցառման «5112 Շենքերի և շինությունների շինարարություն» հոդվածին, ապա հաշվետու ժամանակահատվածի 2,316,472.40 հազ. դրամի չափով ճշտված պլանի դիմաց փաստացի ծախս ընդհանրապես չի կատարվել:

3. «1072 Ջրամատակարարման և ջրահեռացման բարելավում» ծրագրի «31001 Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող

«Ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերանորոգման ծրագրի երրորդ փուլի շրջանակներում ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների հիմնանորոգում» միջոցառման «5112 Շենքերի և շինությունների շինարարություն» հոդվածով «Շիրակ Ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի և «Դորոժնիկ» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրով վերջինիս՝ համաձայն ներկայացված կատարողական ակտերի և հաշվետվությունների, պետք է վճարվեր 39,612.06 հազ. դրամի չափով, սակայն հայտ-գրության հիմքով ՀՏՀ Հիմնադրամին ՀՀ կառավարության համաֆինանսավորման գումարներից փոխանցվել է 200,000.0 հազ. դրամ, կամ փաստացի կատարած աշխատանքների ծավալը 160,387.94 հազ. դրամով գերազանցող գումար:

Հաշվեքննության արդյունքում վերոնշյալ միջոցառումների մասով անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել:

Լ. Յոլյան
ՀՀ հաշվեքննիչ պալատի նախագահ
....10.2021թ.
ՀՀ հաշվեքննիչ պալատ
Բաղրամյան, 19 փողոց, ք. Երևան, Հայաստան

## III. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Հաշվեքննության իրականացման համար ստացվել է բավարար տեղեկատվություն:

Հաշվեքննության արդյունքում խեղաթյուրումներ և անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել:

## IV. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի 2021 թվականի պետական բյուջեի տարեկան ճշտված պլանը կազմել է 30,454,495.00 հազ. դրամ: Հաշվետու ժամանակահատվածի (2021 թվականի վեց ամիսների) ճշտված պլանը կազմել է 20,403,816.90 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 11,035,401.24 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 9,612,561.18 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախս)՝ 10,725,290.01 հազ. դրամ: Հաշվետու ժամանակաշրջանում՝ ճշտված պլանի նկատմամբ, փաստացի ծախսը կատարվել է 47.12%-ով:

ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեում 2021 թվականի վեց ամիսներին նախատեսվել է թվով 7 ծրագրի շրջանակում իրականացնել 37 միջոցառում, որից չի իրականացվել 13 միջոցառում:

ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեում 2021 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման նկատմամբ հաշվեքննությամբ՝ ելնելով նշանակալի հոդվածների նվազագույն ծածկույթից, ընդգրկվել է ստորև ներկայացված աղյուսակում բերված չորս միջոցառում՝ 6,585,419.01 հազ. դրամ ընդհանուր գումարով:

**Հաշվեքննությամբ ընդգրկված նշանակալի հոդվածների վերաբերյալ**

հազ. դրամ

| N | Ծրագիրը, միջոցառումը | | Հոդվածը | | Փաստը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 1004-31005 | Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի շրջանակներում ջրային տնտեսության ենթակառուցվածքների հիմնանորոգում | 511200 | Շենքերի և շինություններ ի շինարարություն | 2,005,701.02 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2 | 1072-31001 | Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլի շրջանակներում ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների հիմնանորոգում | 511200 | Շենքերի և շինությունների շինարարություն | 1,625,126.10 |
| 3 | 1004-31001 | Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Վեդու ջրամբարի կառուցում | 511200 | Շենքերի և շինությունների շինարարություն | 1,766,838.23 |
| 4 | 1072-31002 | Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլի շրջանակներում ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների հիմնանորոգում | 511200 | Շենքերի և շինությունների շինարարություն | 1,187,753.66 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | | **6,585,419.01** |

Ինչպես 2020 թվականին, այնպես էլ 2021 թվականի առաջին եռամսյակում իրականացված հաշվեքննության արդյունքներով ներկայացված ընթացիկ եզրակացություններում արձանագրվել է, որ հաշվեքննության շրջանակում ընդգրկված միջոցառումների մասով կատարված աշխատանքների դիմաց վճարումների հիմքում ընկած կատարողական ակտերը և կատարված ծախսերը հիմնավորող այլ սկզբնական փաստաթղթերը ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի կողմից չեն տրամադրվել, հիմնավորմամբ, որ դրանք գտնվում են Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամում (այսուհետ՝ ՀՏԶ Հիմնադրամ): Նույն հիմնավորմամբ չեն հատկացվել նաև 2021 թվականի վեց ամսվա պետական բյուջեի կատարմանն առնչվող վերոնշյալ փաստաթղթերը:

## ԾՐԱԳԻՐ՝ 1004 «Ոռոգման համակարգի առողջացում»
## ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ «31005 Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի շրջանակներում ջրային տնտեսության ենթակառուցվածքների հիմնանորոգում»

Եվրասիական զարգացման բանկի և Հայաստանի Հանրապետության միջև 2015 թվականի հոկտեմբերի 16-ին ստորագրվել է Եվրասիական տնտեսական ընկերակցության հակաճգնաժամային հիմնադրամի միջոցներից «Ոռոգման

համակարգերի արդիականացման» ծրագրի ֆինանսավորման ներդրումային վարկի տրամադրման մասին համաձայնագիր (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ 40,000.0 հազ. ԱՄՆ դոլար արժեքով: Ըստ Համաձայնագրի հավելված 5-ի ծրագրի նպատակներն են՝

- ոռոգման համակարգերի արդյունավետության բարձրացում,
- ոռոգվող հողերի մակերեսի ընդլայնում,
- ջրօգտագործողների միավորումների (ՋՕՄ) կառավարչական կարողությունների զարգացումը և տեխնիկական հագեցվածության բարձրացումը, ՋՕՄ ֆեդերացիաների ստեղծումը:

Վարկային միջոցները հատկացվել են 2.0% տարեկան տոկոսադրույքով, դրանց օգտագործման ժամկետը սահմանվել է մինչև 10 տարի, մարման ժամկետը՝ 2025-ից մինչև 2035 թվականը, ծրագրի իրականացման վերջնաժամկետը՝ 31.12.2023 թվականը, իսկ վարկի հասանելիության ժամկետը՝ մինչև 30.06.2024 թվականը: Վարկային Համաձայնագրով ՀՀ կառավարության համաֆինանսավորումը նախատեսվել է ոչ պակաս 10,000.0 հազ. ԱՄՆ դոլարի չափով:

50,000.0 հազ. ԱՄՆ դոլարից՝ ներառյալ ՀՀ կառավարության համաֆինանսավորումը, 01.01.2021 թվականի դրությամբ ծախսվել է 16,109.197 հազ. ԱՄՆ դոլարը (32.2%), իսկ 01.07.2021 թվականի դրությամբ՝ 20,565.987 հազ. ԱՄՆ դոլարը, կամ 2021 թվականի վեց ամիսներին ծախսված գումարը կազմել է 4,456.79 հազ. ԱՄՆ դոլար:

Ծրագրի բաղադրիչներն են՝

- **Բաղադրիչ 1**. Մեխանիկական ոռոգման փոխարինում ինքնահոսով: Տվյալ բաղադրիչով աշխատանքներն ավարտվել են և վճարված 135.473 հազ. ԱՄՆ դոլարը, կամ դրան համարժեք 71,003.29 հազ. դրամը շինարարական աշխատանքներ կատարած «ՇՄՇ-23» ԲԲԸ-ի հետավարտական գումարն է
- **Բաղադրիչ 2.** «Մայր և երկրորդ կարգի ջրանցքների վերականգնում», որով փաստացի վճարումները կազմել են 847.363 հազ. ԱՄՆ դոլար, կամ դրան համարժեք 437,532.56 հազ. դրամ
- **Բաղադրիչ 3.** «Ներտնտեսային ոռոգման համակարգերի վերականգնում կամ կառուցում», որի շրջանակում փաստացի վճարումները կազմել են 3,115.218 հազ. ԱՄՆ դոլար, կամ դրան համարժեք 1,608,852.49 հազ. դրամ:

Վերոնշյալ երեք բաղադրիչներով հաշվետու ժամանակաշրջանում հայտերի հիման վրա շինարարական աշխատանքների մասով վճարվել է 4,098.055 հազ. ԱՄՆ դոլար, կամ 2,117,388.34 հազ. դրամ, այդ թվում համաֆինանսավորումը՝ 449,942.10 հազ. դրամ:

31005 միջոցառման «5112 Շենքերի և շինությունների շինարարություն» հոդվածով հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանը կազմել է 2,350,971.70

հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 449,942.10 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 2,630,432.97 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախս)՝ 2,005,701.02 հազ. դրամ: Փաստացի ծախսը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 111.89%:

**ԾՐԱԳԻՐ՝ 1072 «Ջրամատակարարման և ջրահեռացման բարելավում»**
**ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ «31001 Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող՝ Ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերանորոգման ծրագրի երրորդ փուլի շրջանակներում ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների հիմնանորոգում»**

27.12.2013 թվականին ՀՀ կառավարության և KfW բանկի միջև կնքվել է «Համայնքային ենթակառուցվածքների Ծրագիր II – Փուլ 3 - Հայաստանի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածք» ծրագրի պայմանագիր՝ 81,000.0 հազ. եվրո ընդհանուր արժեքով: Ծրագրի ֆինանսավորման աղբյուրն են՝

- KfW վարկը՝ 30,000.0 հազ. եվրո, ՀՀ համաֆինանսավորումը՝ 6,000.0 հազ. եվրո:
- ԵՆԲ վարկը՝ 25,500.0 հազ. եվրո, ՀՀ համաֆինանսավորումը՝ 5,100.0 հազ. եվրո:
- ԵՄ ՀՆԳ դրամաշնորհը՝ 12,000.0 հազ. եվրո, ՀՀ համաֆինանսավորումը՝ 2,400.0 հազ. եվրո:

Ծրագրի շրջանակում նախատեսվել է՝

- Վերանորոգել/կառուցել ՀՀ 6 մարզերի (Շիրակի, Լոռու, Արմավիրի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի և Սյունքի մարզերի) 11 քաղաքների և 41 գյուղական համայնքների ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը՝ կառուցել շուրջ 650.0 կմ նոր ջրագծեր և 25.0 կմ կոյուղագծեր, տեղադրել 25000 հատ անհատական տների ջրաչափական հորեր:
- Կառուցել կոյուղու մաքրման կայաններ Մեծամոր և Սևան քաղաքներում:

Համաձայն Համաձայնագրի՝ KfW բանկի կողմից տրամադրվող վարկի գումարը չի գերազանցում 30,000.0 հազ. եվրոն, որն ամբողջությամբ կուղղի ծրագիրն իրականացնող ընկերություններին բացառապես Հայաստանում ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքի հետագա վերականգնումը ֆինանսավորելու համար՝ ներառյալ խորհրդատվական ծառայությունները: Վարկառուի կամ ծրագիրն իրականացնող ընկերությունների կողմից պարտավորված հարկերը և այլ հանրային վճարները, ինչպես նաև մաքսային պարտավորությունները չեն կարող ֆինանսավորվել վարկային միջոցներից:

Առանձին վարկային Համաձայնագրով Ծրագիրն իրականացնող ընկերությունը հանդիսանում է ՀՏՋ Հիմնադրամը՝ Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման մասնաճյուղի միջոցով, իսկ վարկն՝ ըստ սպասարկման տաարծքների, բաշխվում է հետևյալ կերպ՝ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ 10.81 միլիոն եվրո, «Լոռի ջրմուղկոյուղի» ՓԲԸ՝ 4.32 միլիոն եվրո, «Նոր Ակունք» ՓԲԸ՝ 3.65 միլիոն եվրո և «Շիրակ ջրմուղկոյուղի» ՓԲԸ՝ 11.22 միլիոն եվրո:

Պարտավորության վճարը սահմանվել է տարեկան 0.25%, որը ենթակա է հաշվարկման վարկի մնացորդային գումարներից՝ վճարելով կես տարին մեկ:

Ծրագիրը նախատեսվել է իրականացնել 2016-2023 թվականների ընթացքում:

01.01.2021 թվականի դրությամբ վարկային միջոցներից ծախսվել է 3,929.77 հազ. եվրո, կամ ծրագրով նախատեսվածի 11.0%-ը: 01.07.2021 թվականի դրությամբ ծախսը կազմել է 6,533.03 հազ. եվրո, իսկ 2021 թվականի վեց ամսվա ծախսը՝ 2,603.30 հազ. եվրո:

31001 միջոցառման «5112 Շենքերի և շինությունների շինարարություն» հոդվածով հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանը կազմել է 2,461,281.50 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 200,000.00 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 237,672.37 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախս)՝ 1,625,126.10 հազ. դրամ, կամ փաստացի ծախսը՝ ճշտված պլանի նկատմամբ, կազմել է 9.66%:

Ծրագրի շրջանակում 2021 թվականի 1-ին կիսամյակում՝ հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության փոխանցումների էլեկտրոնային համակարգում տվյալ պահին հաստատված արժույթը, «Դորոժնիկ» ՍՊԸ-ին փոխանցվել է ընդամենը 1,609,385.54 հազ. դրամ:

**ԾՐԱԳԻՐ՝ «1004 Ջրամատակարարման և ջրահեռացման բարելավում»**

**ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ «31001 Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Վեդու ջրամբարի կառուցում»**

Զարգացման ֆրանսիական գործակալության (այսուհետ՝ ԶՖԳ, վարկատու) և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև 2016 թվականի հունվարի 26-ով թվագրվել է ՀՄ. CAM 1002 01 Y վարկային համաձայնագիրը:

Վարկային համաձայնագրի պայմաններին համապատասխան՝ Վարկատուն տրամադրում է 75,000.00 հազ. եվրո առավելագույն ընդհանուր գումարի չափով վարկ:

Ծրագրի նպատակն է բարելավել ջրային ռեսուրսների և ոռոգվող գյուղատնտեսության կայունությունը բերրի Արարատյան հարթավայրում՝ ապահովելով հավելյալ վերականգնվող ջրային ռեսուրսներ Վեդու ջրամբարի կառուցման և բարելավելով ոռոգման արդյունավետությունը ցանցի

վերանորոգման և արդիականացման միջոցներով: Վերացնելով ջրային և ոռոգման ցանցերի սահմանափակումները՝ ծրագրի նպատակն է վերացնել Արարատյան հարթավայրում գյուղատնտեսական հողերը լքելու միտումը:

Համաձայնագրի 4-րդ հոդվածի 4.1.1 կետով սահմանվել են ֆիքսված տոկոսադրույք, մասնավորապես՝ յուրաքանչյուր առհանման նկատմամբ կիրառելի տոկոսադրույքը պետք է լինի ստորագրման օրվանից մինչև համապատասխան դրույքի սահմանման օրն ընկած ժամանակահատվածում ինդեքսային դրույքի տատանումից ավելացող կամ նվազող ֆիքսված հաշվարկային դրույքը: Բացի այդ, որոշված տոկոսադրույքը չպետք է գերազանցի տարեկան 6.25%-ը, կամ ավելի ցածր լինի տարեկան 0.25%-ից՝ անկախ տոկոսադրույքի նվազումից:

Ծրագիրը պարունակում է հետևյալ բաղադրիչները՝

**Բաղադրիչ 1.** Վեդու ջրամբարի և օժանդակ կառուցվածքների շինարարություն, որը ներառում է Վեդու ջրամբարի և օժանդակ կառույցների շինարարություն:

**Բաղադրիչ 2.** Ոռոգելի մակերեսի վերականգնում, արդիականացում և ընդլայնում:

Աշխատանքները պետք է նպաստեն ցանցի արդյունավետության 50%-ից մինչև 75%-ի չափով (հնարավոր է նույնիսկ 80%-ի չափով, եթե վերանորոգումն ուղեկցվի սարքավորումների տեղադրմամբ) բարձրացմանը:

Վերոնշյալ երկու բաղադրիչների ընդհանուր արժեքը գնահատվել է 75,000.0 հազ. եվրո, ՀՀ կառավարության մասնակցությունը՝ 15,000.0 հազ. եվրո (ԱԱՀ-ի մասով):

31001 միջոցառման տարեկան ճշտված պլանով «5112 Շենքերի և շինությունների շինարարություն» հոդվածով նախատեսվել է 5,071,075.1 հազ. դրամի ծախս, հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանը կազմել է 3,779,064.10 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 423,798.50 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 2,565,554.91 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախս)՝ 1,766,838.23 հազ. դրամ: Փաստացի ծախսը՝ ճշտված պլանի նկատմամբ, կազմել է 67.88%:

Վճարումները կատարվել են ՀՏՋ Հիմնադրամի կողմից ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտե ներկայացված հայտ-գրությունների հիման վրա՝ ընդամենը 892,144.4 հազ. դրամի չափով: ՀՏՋ Հիմնադրամի կողմից 23.06.2021 թվականի հայտ-գրությամբ ներկայացված 628,345.7 հազ. դրամից 2021 թվականի առաջին կիսամյակում փոխանցվել է 160,000.0 հազ. դրամ, իսկ մնացած 423,798.50 հազ. դրամը փոխանցվել է 3-րդ եռամսյակում:

Համաձայն ՀՏՋ Հիմնադրամի «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման մասնաճյուղ»-ի կողմից ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեին ներկայացված Հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին 01.01.2021-30.06.2021 թվականի ժամանակահատվածի վարկային միջոցների և ՀՀ կառավարության համաֆինանսավորման վերաբերյալ

հաշվետվությունների՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորման գծով՝ ըստ օրինակելի ձև Հ-2 հաշվետվության, տարեկան ճշտված պլանով 5112 հոդվածով ծախսը նախատեսվել է 1,107,979.4 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 423,798.5 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 427,481.36 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախս)՝ 384,719.89 հազ. դրամ:

Ըստ հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին (վարկային միջոցներ) ձև Հ-2 հաշվետվության՝ տարեկան ճշտված նախահաշվով 5112 հոդվածով ծախսը նախատեսվել է 3,963,095.7 հազ. դրամի չափով, փաստացի ծախսը կազմել է 2,138,073.55 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախս)՝ 1,382,118.34 հազ. դրամ:

Ըստ հիմնարկի դեբիտորական և կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների վերաբերյալ ձև Հ-4 հաշվետվության՝ 01.01.2021 թվականի դրությամբ տարեսկզբի կրեդիտորական պարտքը բյուջեից կազմել է 343,021.13 հազ. դրամ, 01.07.2021 թվականի դրությամբ՝ 385,782.6 հազ. դրամ:

Կիսամյակային հաշվետվությունը ձևավորելիս հիմք է ընդունվել ՀՀ ֆինանսների նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 01/73/19739-2020 գրությամբ սահմանված փոխարժեքների մակարդակը:

Ծրագրի շրջանակում 2021 թվականի 1-ին կիսամյակում ՀՀ ֆինանսների նախարարության «Client-Treasury» համակարգով «Սահակյանշին» ՓԲԸ (ՀՀ) – «ՊԵԳԱ Քընսսթրակշն» ԲԸ (Իրան) ՀՁ–ին փոխանցվել է ընդամենը 2,234.147 հազ. եվրո, կամ դրան համարժեք 1,368,391.97 հազ. դրամ:

ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված հաշվետվությամբ դրամարկղային ծախսը ցույց է տրվել 1,766,838.23 հազ. դրամ, իսկ վճարումը «Սահակյանշին» ՓԲԸ-ին կազմել է 1,753,111.66 հազ. դրամ:

## ԾՐԱԳԻՐ՝ «1072 Ջրամատակարարման և ջրահեռացման բարելավում» ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ «31002 Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլի շրջանակներում ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների հիմնանորոգում»

Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի զարգացման բանկի (այսուհետ՝ ԳԶԲ) միջև 27.12.2013 թվականին կնքած «Համայնքային ենթակառուցվածքների ծրագիր II – փուլ 3» պայմանագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև 27.06.2014 թվականին կնքվել է «Համայնքային ենթակառուցվածքների ծրագիր II – Փուլ 3 (ԵՆԲ բաղկացուցիչ) – ջրային ոլորտի համայնքային ենթակառուցվածք» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման ֆինանսական պայմանագիր:

Պայմանագրով հատկացման ենթակա վարկի գումարը կազմել է 25,500.0 հազ. եվրո, իսկ Հայաստանի Հանրապետության համաֆինանսավորումը՝ 5,100.0 հազ. եվրո, կամ ընդամենը ծրագրի իրականացման համար նախատեսվել է 30,600.0 հազ. եվրո գումար:

30,600.00 հազ. եվրո վարկից՝ ներառյալ ՀՀ կառավարության համաֆինանսավորումը, 01.01.2021 թվականի դրությամբ գումար չի ծախսվել, իսկ 01.07.2021 թվականի դրությամբ ծախսվել է՝ 1,862.588 հազ. եվրո:

ԵՆԲ-ի կողմից վարկը հատկացվել է առավելագույնը 10 մասնաբաժնով (տրանշով), յուրաքանչյուր մասնաբաժնի գումարը, եթե այն չի համարվում վարկի օգտագործված մաս, նվազագույնը կազմում է 2,500.0 հազ. եվրո:

Պայմանագրով սահմանվել է, որ Վարկառուն տոկոսի վճարումը կատարում է մասերով, ֆիքսված տոկոսադրույքով և յուրաքանչյուր տրանշի չմարված հաշվեկշռի մասով՝ ֆիքսված տոկոսադրույքով, կիսամյակային կտրվածքով, հատկացման առաջարկում նշված համապատասխան վճարման ամսաթվերին:

Ծրագրի նպատակն է ապահովել խմելու ջրի կայուն և շարունակական մատակարարումը և բարելավել կոյուղաջրերի սանիտարահիգիենիկ հեռացումը համակարգի հիմնական կետերում, ինչպես նաև ապահովել կոյուղաջրերի մաքրման էկոլոգիապես առողջ և կայուն գործընթաց «Նոր Ակունք» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում:

Ծրագիրը ներառում է՝

- Վանաձորում և Գյումրիում ջրամատակարարման և կոյուղու օբյեկտների շարունակական վերանորոգումն, ինչպես նաև Լոռու և Շիրակի մարզերի գյուղական շրջաններում այդ օբյեկտների բարեկարգումը:
- Արմավիրի մարզում ջրամատակարարման և կոյուղու օբյեկտների շարունակական վերականգնումը, ինչպես նաև համատեղ մաքրման կայանի կառուցումը Արմավիրի (Մեծամոր,Նորապատ) քաղաքների համար:
- Ջրամատակարարման և կոյուղաջրերի հավաքման համակարգեր Գեղարքունիքի, Սյունիքի և Վայոց Ձորի մարզերի մոտ 40 փոքր քաղաքներում և գյուղերում՝ «Հայջրմուղկոյուղի» ընկերության սպասարկման տարածքներում:
- Փոքրածավալ միջոցառումներ փորձնական ծրագրի ձևաչափով մոտ 560 գյուղերում, որոնք նախկինում չէին սպասարկվում հինգ ջրային ընկերություններից որևէ մեկի կողմից:

Ծրագիրն իրականացվելու է ՀՀ մարզերը սպասարկող «Նոր Ակունք», «Շիրակ», «Լոռի» և «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ների կողմից՝ ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի պատասխանատվության ներքո:

Ծրագիրը նախատեսվել է իրականացնել 2014-2018 թվականների ընթացքում:

2020 թվականի օգոստոսի 3-ին կնքվել է ֆինանսական պայմանագրի թիվ 1 փոփոխությունը, որով վարկի միջոցների հասանելիության վերջնաժամկետ

սահմանվել է 2022 թվականի դեկտեմբերի 30-ը: Պայմանագիրն ուժի մեջ է մտել 2020 թվականի սեպտեմբերի 7-ից:

ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ Ծրագրի իրականացման ուշացումը պայմանավորված է այն հանգամանքով, որ շինարարական աշխատանքների համար հայտարարված մրցութային գործընթացի նախավորակավորման փուլը հաղթահարած իրանական կազմակերպությունները բանակցությունների արդյունքում հանվել են մրցութային հետագա գործընթացից՝ ԳՋԲ-ի կողմից իրանական կազմակերպությունների ֆինանսավորման իրականացման անհնարինության պատճառով:

31002 միջոցառման տարեկան ճշտված պլանով «511200 Շենքերի և շինությունների շինարարություն» հոդվածով նախատեսվել է 2,316,472.40 հազ. դրամի ծախս, հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանը կազմել է 1,256,854.20 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 110,000.00 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախս)՝ 1,187,753.66 հազ. դրամ, փաստացի ծախս չի կատարվել:

Համաձայն ՀՏՋ Հիմնադրամի «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման մասնաճյուղ»-ի կողմից ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեին ներկայացված՝ 01.01.2021-30.06.2021 թվականի ժամանակահատվածի՝ ըստ հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին (վարկային միջոցներ և ՀՀ կառավարության համաֆինանսավորում) Հ-2 հաշվետվության՝ 31002 միջոցառման մասով (վարկային միջոցներից) տարեկան ճշտված նախահաշվով նախատեսվել է 2,070,313.70 հազ. դրամի ծախս, 30.06.2021 թվականի դրությամբ դրամարկղային ծախսը կազմել է 1,187,753.66 հազ. դրամ: Տվյալ հոդվածով տարեկան ճշտված նախահաշվով ծախսը կազմել է 1,930,393.70 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 2,259,108.0 հազ. դրամ (ներառյալ 5134 հոդվածով ֆինանսավորումը), դրամարկղային ծախսը՝ 1,187,753.66 հազ. դրամ (կանխավճար), փաստացի ծախս չի կատարվել: Նույն միջոցառման գծով Հ-2 հաշվետվությամբ ՀՀ կառավարության համաֆինանսավորման մասով տարեկան ճշտված նախահաշվով նախատեսվել է 425,118.90 հազ. դրամի ծախս, իսկ ֆինանսավորում, փաստացի և դրամարկղային ծախս չի կատարվել:

ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի նախագահին ՀՏՋ Հիմնադրամի կողմից 25.06.2021 թվականին ուղղվել են համապատասխանաբար՝ 60,000.00 և 50,000.00 հազարական դրամի չափով ՀՏՋ Հիմնադրամի անվամբ ՀՀ գանձապետարանում գործող հաշվեհամարին գումարներ փոխանցելու վերաբերյալ հայտ-գրություններ՝ 5112 հոդվածով կատարված աշխատանքների դիմաց վճարումներ կատարելու համար: Նշված գումարը փոխանցվել է ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետարանում բացված տարանցիկ հաշվից ՀՏՋ Հիմնադրամին 2021 թվականի 3-րդ եռամսյակում:

31002 միջոցառման իրականացման բաղադրիչների շրջանակներում «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գտնվող Գեղարքունիքի, Վայոց Ձորի, Սյունիքի մարզերում ջրամատակարարման ցանցերի և ջրահեռացման համակարգերի վերականգնման նպատակով 11.05.2021 թվականին «Բլեսկ» ՍՊԸ-ի Հայաստանյան մասնաճյուղ - «Եղվարդշին» ԲԲԸ կոնսորցիումի հետ կնքվել է 11,175.527 հազ. եվրո գումարով պայմանագիր: Պայմանագրի համաձայն՝ 2021 թվկանի առաջին կիսամյակում կազմակերպությանը հատկացվել է 1,862.587 հազ. եվրո, կամ դրան համարժեք 1,187,753.66 հազ. դրամի չափով կանխավճար:

Ծրագրի գումարի մնացորդը 01.07.2021 թվականի դրությամբ կազմել է 28,737.412 հազ. եվրո:

## V. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

1. ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեում չեն ապահովվել 2021 թվականի վեց ամիսների ՀՀ պետական բյուջեով նախատեսված պլանային ցուցանիշները, այսպես՝

✓հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանը հաստատվել է 20,403,816.90 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 9,612,561.18 հազ. դրամ, կամ ճշտված պլանը կատարվել է 47.12%-ով:

✓2021 թվականի վեց ամիսներին նախատեսվել է թվով 7 ծրագրի շրջանակում իրականացնել 37 միջոցառում, որից 13-ը չի իրականացվել:

✓«1072 Ջրամատակարարման և ջրահեռացման բարելավում» ծրագրի «31001 Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող՝ Ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերանորոգման ծրագրի երրորդ փուլի շրջանակներում ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների հիմնանորոգում» միջոցառման «5112 Շենքերի և շինությունների շինարարություն» հոդվածով ճշտված պլանը կազմել է 2,461,281.50 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 237,672.37 հազ. դրամ, կամ կատարվել է 9.66%-ով:

✓1072 ծրագրի «31002 Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլի շրջանակներում ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների հիմնանորոգում» միջոցառման «511200 Շենքերի և շինությունների շինարարություն» հոդվածով նախատեսված 2,316,472.40 հազ. դրամի չափով ճշտված պլանի դիմաց փաստացի ծախս ընդհանրապես չի կատարվել:

2. «1072 Ջրամատակարարման և ջրահեռացման բարելավում» ծրագրի «31001 Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող «Ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերանորոգման ծրագրի երրորդ փուլի շրջանակներում ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների հիմնանորոգում» միջոցառման «511200 Շենքերի և շինությունների շինարարություն» հոդվածով «Շիրակի Ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի և «Դորոժնիկ» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրով վերջինիս՝ համաձայն ներկայացված կատարողական ակտերի և հաշվետվությունների, պետք է վճարվեր 39,612.06 հազ. դրամի չափով, սակայն հայտ-գրության հիմքով ՀՏՋ Հիմնադրամին ՀՀ կառավարության համաֆինանսավորման գումարներից

փոխանցվել է 200,000.0 հազ. դրամ, կամ փաստացի կատարած աշխատանքների ծավալը 160,387.94 հազ. դրամով գերազանցող գումար:

## VI. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեն բավարար միջոցներ չի ձեռնարկել 2021 թվականի առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջեով հաստատված միջոցառումների և դրանց շրջանակներում շինարարական աշխատանքների նախատեսված ծավալով կատարման ուղղությամբ:

2. ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեն չունի ՀՏԶ Հիմնադրամի կողմից ներկայացված հայտ-գրությունների հիման վրա փոխանցվող գումարների հիմնավորվածությունը հավաստող փաստաթղթերի ճշտության նկատմամբ վերահսկողական մեխանիզմներ:

# VII. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

**ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը**

Քննարկել ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեին լրացուցիչ գործառույթներ ամրագրելու հարցը՝ կապված ՀՏՋ Հիմնադրամի կողմից ներկայացվող հայտ-գրություններում արտացոլված և դրանց հիման վրա փոխանցվող գումարների ճշտությունն ու կատարողական ակտերին համապատասխանությունն ապահովելու հետ:

**ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեին**

Վերլուծել 2021 թվականի առաջին կիսամյակում պետական բյուջեով նախատեսված ծրագրերի և իրականացվող միջոցառումների կատարման ընթացքը, մշակել կոնկրետ միջոցառումներ արձանագրված թերակատարումները վերացնելու ուղղությամբ:

Հաշվեքննության իրականացման ընթացքում հաշվեքննվող օբյեկտից ստացվել է բավարար տեղեկատվություն:

Ծանոթացման և ստորագրման նպատակով հաշվեքննության արձանագրությունը ներկայացվել է հաշվեքննության օբյեկտի ղեկավարին, որի վերաբերյալ դիտողություններ և առարկություններ չեն ներկայացվել, ներկայացվել են առաջարկություններ (կցվում են):

ՀՀ հաշվեքննիչ պալատի նախագահ

Լևոն Յոլյան

<<_13_>> _____10_____ 2021թ. N 01/06/4201-2021

Ձեր _____ 2021թ. N _____

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն Լ. ՅՈԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Յոլյան

Ի պատասխան Ձեր 28.09.2021թ. N ՀՊԵ-483 գրության՝ ՀՀ Հաշվեքննիչ պալատի 02.08.2021թ. N 220-Ա որոշմամբ հաստատված ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեում 2021 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից ուղարկված հաշվեքննության արձանագրության վերաբերյալ ներկայացնում եմ Ջրային կոմիտեի գրավոր առաջարկությունները.

1. Արձանագրության 4-րդ էջի Բաղադրիչ 2. կետում նշված «437,530.24 հազ. դրամ» գումարը առաջարկում ենք փոխարինել «437,532.56 հազ. դրամ» գումարով,

2. Արձանագրության 8-րդ էջի 2.1 կետի մասով, նկատի ունենալով Առանձին համաձայնագրում 28.08.2020թ. կատարված փոփոխությունները առաջարկում ենք ամբողջությամբ խմբագրել 2.1 կետը՝ «Առանձին Վարկային Համաձայնագրի համաձայն Ծրագիրն իրականացնող ընկերությունը հանդիսանում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (ՀՏԶՀ)՝ Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման մասնաճյուղի միջոցով, Ջրային կոմիտեի պատասխանատվության ներքո, հետևյալ կերպ՝

| | |
|---|---|
| «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածք | 10,81 միլիոն Եվրո |
| «Լոռի ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածք | 4,32 միլիոն Եվրո |
| «Նոր Ակունք» ՓԲԸ-ի սպասարկման տարածք | 3,65 միլիոն Եվրո |
| «Շիրակ ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածք | 11,22 միլիոն Եվրո |
| | --- |
| Ընդամենը | 30,00 միլիոն Եվրո»: |

3. Արձանագրության 15-րդ էջում՝ բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին ձև 2 հաշվետվության մեջ փաստացի ծախսը արտացոլվել է 2,382,118.34 հազ. դրամ,

սակայն ըստ ներկայացված հաշվետվության և ՀՀ ֆինանսների նախարարության հաշվետվությունների էլեկտրոնային համակարգ ներմուծված տեղեկատվության փաստացի ծախսի գումարը կազմում է 2,138,073.55 հազ.դրամ: Խնդրում եմ արձանագրության մեջ կատարել գումարի փոփոխություն:

4. Արձանագրության 17-րդ էջում՝ առաջարկում եմ արձանագրության մեջ նշված «Ծրագիրն իրականացվելու է ՀՀ մարզերը սպասարկող «Նոր Ակունք», «Շիրակ», «Լոռի» և «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ների կողմից՝ ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի պատասխանատվության ներքո: Ծրագիրը նախատեսվել է իրականացնել 2014-2018 թվականների ընթացքում:» պարբերությունը փոխել նոր պարբերությամբ «Ծրագիրն իրականացվելու է ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ՀՏՋՀ-ի միջոցով՝ Ջրային կոմիտեի պատասխանատվության ներքո: Ծրագիրը նախատեսվել է իրականացնել 2016-2023 թվականների ընթացքում:»՝ նկատի ունենալով ծրագրի մասով կատարված փափոխությունները:

5. Միաժամանակ կից ներկայացնում եմ Ջրային կոմիտեի կողմից ստորագրված ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեում 2021 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը:

Հարգանքով՝

Ջրային կոմիտեի նախագահի

պարտականությունները կատարող Կ. ԴԱՂԲԱՇՅԱՆ

Ք. Աղվանյան

54-72-81